

Լ. Ն. ԱՎԵՏԻՍՅԱՆ, Մ. Ռ. ՍՈՂՈՄՈՆՅԱՆ

ՀԱՅՈՑ ԼԵՂՎԻ ԳՈՐԾՆԱԿԱՆ ԴԱՍԸՆԹԱՑ

ՀՆՁՅՈՒՆԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ

*Ուսումնական ձեռնարկ բուհերի ոչ մասնագիտական
ֆակուլտետների համար*

ԵՐԵՎԱՆ – 2017

ՀՏԴ
ԳՄԴ
Ա

**Տպագրվում է Խ. Աբովյանի անվ. ՀՊՄՀ
բանասիրական ֆակուլտետի գիտական խորհրդի որոշմամբ**

Պատասխանատու խմբագիր՝

բան. գիտ. դոկտոր, պրոֆեսոր Լ. Մ. Խաչատրյան

Գիտամեթոդական խորհրդատու՝

բան. գիտ. թեկնածու, դոցենտ Ա. Վ. Գալստյան

Ավետիսյան Լ. Ն., Սողոմոնյան Մ. Ռ.

Լայոց լեզվի գործնական դասընթաց: Հնչյունաբանություն: Ուսում-
Ա 630 նական ձեռնարկ բուհերի ոչ մասնագիտական ֆակուլտետների
համար/Լ. Ն. Ավետիսյան, Մ. Ռ. Սողոմոնյան, խմբ.՝ Լ. Մ. Խա-
չատրյան.-Եր.: Էդիթ Պրինտ, 2017.- 160 էջ:

Հայոց լեզվի հնչյունաբանության գործնական աշխատանքների սույն ձեռնարկում առաջադրանքների համակարգը տրված է ըստ տարբեր մասնագիտացումների: Նրանում առկա բնագրային նյութը վերաբերում է գեղարվեստական և գիտական (մասամբ հրապարակախոսական) ոճերին, կարող է ոչ միայն նպաստել ուսանողների ուղղախոսական և ուղղագրական, ընդհանրապես հնչյունաբանական գիտելիքների մշակմանն ու խորացմանը, այլև նրանց մասնագիտական բնագավառում ունենալ ճանաչողական արժեք և նշանակություն:

Ձեռնարկը նախատեսված է բուհերի ոչ մասնագիտական ֆակուլտետների ուսանողների համար: Այն կարող է օգտակար լինել նաև ավագ դպրոցի հումանիտար և բնագիտամաթեմատիկական հոսքերի աշակերտներին և ուսուցիչներին:

ISBN 978-9939-

ՀՏԴ
ԳՄԴ

© Ավետիսյան Լ. Ն., Սողոմոնյան Մ. Ռ.
© Էդիթ Պրինտ

*... Ձեզ եմ ասում, ձեզ՝ հայոց նորահաս երիտասարդք,
ձեր անունին մեռնիմ, ձեր արևին դուրբան, փասը լեզու
սովորեցե՞ք, ձեր լեզուն, ձեր հավապը դայիմ բռնեցե՞ք:*

*... Աստված կյանք փա էն ծնողացը, որի որդիքն ինձ
մոտ են: Նրանց առաջին խնդիրը միշտ էն ա էլել, որ
նրանց որդիքը հայերեն լավ գիրենան: Գերեզմանն էլ
որ մղնիմ, նրանց էս սուրբ խոսքը մտքիցս չի՛ գնալ...*

Խաչատուր Աբովյան

ԵՐԿՈՒ ԽՈՍՔ

Հայոց լեզվի հնչյունաբանության գործնական աշխատանքների սույն ձեռնարկը նախատեսված է բուհերի ոչ մասնագիտական ֆակուլտետների ուսանողների համար: Ձեռնարկի հեղինակները նկատի են առել ոչ մասնագիտական ֆակուլտետներում դասավանդվող «Հայոց լեզու» առարկայի հնչյունաբանություն բաժնի առանցքային հարցերը, նպատակը և խնդիրները:

Ձեռնարկն ստեղծվել է Երևանի Խ. Աբովյանի անվան ՀՊՄՀ Ար. Ղարիբյանի անվան հայոց լեզվի և նրա դասավանդման մեթոդիկայի ամբիոնում և, բնականաբար, ձեռնարկի հեղինակներն այն հասցեագրել են մասնավորաբար Հայաստանի Հանրապետությունում մանկավարժներ պատրաստող կարևորագույն դարբնոցի՝ ՀՊՄՀ-ի ոչ մասնագիտական ֆակուլտետների ուսանողներին:

Հայոց լեզվի գործնական առաջադրանքների սույն ձեռնարկում վարժությունների համակարգը տրված է ըստ մասնագիտական բնագավառների. յուրաքանչյուր առաջադրանք ներկայացված է ըստ մասնագիտացումների՝

- Ա. Պատմություն և իրավագիտություն**
- Բ. Կուլտուրա: Գեղարվեստական կրթություն**
- Գ. Կրթության հոգեբանություն և սոցիոլոգիա**
- Դ. Կենսաբանություն, քիմիա և աշխարհագրություն**
- Ե. Մաթեմատիկա, ֆիզիկա և ինֆորմատիկա:**

Ըստ իր նախընտրության՝ ոչ մասնագիտական ֆակուլտետում դասավանդող դասախոսը փոխներգործուն (ինտերակտիվ) դասագործընթացներ իրականացնելիս կարող է ձեռնարկում ընդգրկված վարժությունները հանձնարարել կատարել լսարանային պայմաններում կամ տանը, ընդամին՝ առցանց ուսուցման «Classroom» հարթակում: Հարկ է նշել, որ վերջինիս շրջանակներում նախատեսված ամսական (վիրտուալ տիրույթում գնահատվող) առաջադրանքները հեղինակների կարծիքով պետք է ունենան ամփոփիչ վարժությունների բնույթ (դրանցից մեկ-երկուսի նմուշօրինակները տես սույն ձեռնարկի «Հավելված 1» և «Հավելված 2» ենթաբաժիններում):

Ձեռնարկում ընդգրկված գործնական առաջադրանքները վերաբերում են հայոց լեզվի հնչյունաբանությանը, ուղղախոսությանը և ուղղագրությանը՝ ընդգրկելով մասնավորապես հետևյալ ենթաբաժինները.

1. Հնչյունաբանական վերլուծություն

2. Ուղղախոսություն և ուղղագրություն

- Ձայնավորների արտասանությունը
- Երկհնչյունների արտասանությունը
- Բաղաձայների արտասանությունը
- Ձայնավորների ուղղագրությունը
- Երկհնչյունների ուղղագրությունը
- Յ ձայնակապի ուղղագրությունը
- Բաղաձայնների ուղղագրությունը
- Կրկնակ բաղաձայնների ուղղագրությունը
- Եվ-ի ուղղագրությունը
- Մեծատառերի ուղղագրությունը
- Բառերի միասին, անջատ կամ գծիկով գրությունը
- Վանկ
- Տողադարձ
- Բառային շեշտ

3. Հնչյունափոխություն:

Եկատենք, որ բուհում հայոց լեզվի դասավանդման նախապայմանն ավագ դպրոցում հայոց լեզու առարկայից ունեցած իմացությունն է: Այս ձեռնարկը կարող է օգտակար լինել նաև ավագ դպրոցի թե՛ հումանիտար, թե՛ բնագիտամաթեմատիկական հոսքերի աշակերտներին և ուսուցիչներին:

Սույն գործնական դասընթացի նպատակն է՝

1. Ճանաչել տալ լեզվի հնչյունաբանական միավորները (ծայնավոր և բաղաձայն հնչյուններ, երկհնչյուններ, վանկ, շեշտ):
2. Գաղափար տալ ուղղագրության և ուղղախոսության, ինչպես նաև հնչյունափոխության վերաբերյալ:
3. Ուսուցանել լեզվի վանկային համակարգը, տողադարձի ընթացքում վանկի դերն ու նշանակությունը, ինչպես նաև տողադարձի սկզբունքները:

Ըդսմին, հայոց լեզվի ուսուցման և ուսումնառության գործընթացի առանցքային խնդիրներն են ճանաչել ժամանակակից հնչյունական համակարգի միավորներն ու օրինաչափությունները, կարևորել դրանց յուրահատկությունները խոսքային միջավայրում:

«Հնչյունաբանություն» գործնական դասընթացի վերջնաարդյունքում ուսանողը պետք է՝

1. Իմանա լեզվի հնչույթային մակարդակի միավորների ունեցած դերը լեզվի կառուցվածքում, դրանց կազմությունը և տեսակները:
2. Հնչյունափոխական իրողությունները, հնչյունափոխության տեսակներն ընդհանրապես և դիրքային կամ շեշտափոխական հնչյունափոխությունը մասնավորապես:
3. Ուղղագրության հիմունքները, բառերի ճիշտ գրության և արտասանության կանոնները:
4. Կարողանա ճանաչել հնչյունափոխական իրողությունները, ուղղագրության և ուղղախոսության սկզբունքները, տողադարձի կանոնները և դրանց հիման վրա անսխալ բանավոր և գրավոր խոսք հյուսել:

5. Տիրապետի հնչյունաբանության ուսումնասիրության խնդիրներին, ուղղագրության և ուղղախոսության հիմունքներին, ինչպես նաև առցանց ուսուցման հարթակում համապատասխան տեղեկությի ստացմանը, յուրացմանն ու ամփոփիչ առաջադրանքների կատարմանը:

Ընդ որում, գործնական առաջադրանքներից յուրաքանչյուրում առկա է մասնագիտական տվյալ բնագավառից քաղված վարժությունների համակարգ: Այդ կարգի առաջադրանքներում առկա բնագրային նյութը վերաբերում է գեղարվեստական և գիտական (մասամբ հրապարակախոսական) ոճերին, կարող է ոչ միայն նպաստել ուսանողների ուղղախոսական և ուղղագրական, ընդհանրապես հնչյունաբանական գիտելիքների զարգացմանն ու խորացմանը, այլև նրանց մասնագիտական բնագավառում ունենալ ճանաչողական արժեք և նշանակություն:

Հիմք ընդունելով Խ. Աբովյանի անվան ՀՊՄՀ-ում ընթացող կրթության բարեփոխումների և որակի ապահովման դիտանկյունից կարևորվող ուսումնամեթոդական փաթեթների առկայությունը՝ սույն ձեռնարկի հեղինակները հավելվածների տեսքով զետեղել են նաև գործնական, լաբորատոր և սեմինար պարամունքների մեկ-երկու նմուշօրինակ (տե՛ս «Հավելված 1» և «Հավելված 2» ենթաբաժինները): Ոչ մասնագիտական ֆակուլտետի դասախոսը ուսումնամեթոդական հիմնական փաթեթին զուգահեռ կարող է հաջողությամբ կիրառել հեղինակների առաջարկած վարժությունները՝ ըստ մասնագիտացումների:

Հավելենք, որ սույն գործնական դասընթացը ծնվել է ՀՊՄՀ-ի ոչ մասնագիտական ֆակուլտետներում հեղինակների դասավանդման փորձի ընթացքում: ՀՊՄՀ-ի կուլտուրայի, գեղարվեստական կրթության, մաթեմատիկայի, ֆիզիկայի և ինֆորմատիկայի, կենսաբանության, քիմիայի և աշխարհագրության, պատմության և իրավագիտության (ներկայիս պատմության և հասարակագիտության), կրթության հոգեբանության և սոցիոլոգիայի ֆակուլտետներում հայոց լեզու դասավանդելու ընթացքում հեղինակները

նկատել են, որ ուսանողներն առավել մեծ հետաքրքրություն և ոգևորություն են ցուցաբերում դասագործընթացի հատկապես այն փուլերում, երբ քննարկվում են մասնագիտական ուղղվածություն ունեցող տեքստեր, կատարվում են բնագրային աշխատանքներ նրանց հետաքրքրող ոլորտների տեքստերի շրջանակներում: Հաշվի առնելով այս կարևոր իրողությունը՝ հեղինակները ձեռնամուխ եղան գրելու «Հնչյունաբանություն» ուսումնական ձեռնարկը՝ հիմք ընդունելով նաև այն հանգամանքը, որ ոչ մասնագիտական ֆակուլտետներում հայոց լեզվի ուսուցման գերակա նպատակները ուսանողների շրջանում կապակցված խոսք հյուսելու հմտությունների մշակումն ու անսխալ բանավոր և գրավոր խոսքի զարգացումն են: Ոչ մասնագիտական ֆակուլտետի ուսանողներն այդպիսով ձեռք են բերում անթերի, առանց լեզվական մեղանշումների խոսք և ապագա մանկավարժական գործունեության ընթացքում դրսևորում լեզվական ճկունություն և անաղարտություն:

Կարծում ենք, որ գործնական սույն դասընթացը կնպաստի բուհերի ոչ մասնագիտական ֆակուլտետներում հայոց լեզվի դասավանդման արդյունավետության բարձրացմանը, ուսանողների բանավոր և գրավոր կապակցված խոսքի զարգացմանը, ընդհանրապես նրանց լեզվաոճական գիտելիքների հարստացմանը:

ՀՆՉՅՈՒՆԱԲԱՆԱԿԱՆ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ

1. Հետևյալ ասույթներից ընտրե՛ք հինգ բառ և ենթարկե՛ք հնչյունաբանական վերլուծության:

Ա. Պատմություն և իրավագիտություն

Դժբախտությունն այն է, որ պետության մեջ ոչ ոք չի ուզում ապրել և վայելել, այլ յուրաքանչյուրը ցանկանում է ղեավարել:

Կատարյալ մարդկություն ստեղծելու դեպքում միայն հնարավոր կդառնա կատարյալ օրենքների գոյությունը:

Ժողովրդաճանաչ դառնալու համար մեծ միապետից ոչինչ չի պահանջվում, բացի իր սեփական մեծությունից (Գ):

Բ. Կուլտուրա

Գեղարվեստական կրթություն

Արվեստի իսկական կյանքն առանձնահատուկ ընկալման և պատկերման ունակության մեջ է:

Ով ուզում է դերասաններ դաստիարակել, պետք է մեծ համբերություն ունենա:

Երբ ես ցանկանում եմ որևէ բանաստեղծության համար երաժշտություն գրել, ամենից առաջ աշխատում եմ թափանցել բառիմաստների մեջ և կենդանի պատկերացնել իրադրությունը:

Կերպարվեստի առավելությունն այն է, որ նա մեզ իրեն է ձգում, սակայն առանց մեր զգացմունքներն ուժգնորեն կաշկանդելու (Գ):

Գ. Կրթության հոգեբանություն և սոցիոլոգիա

Վարքագիծը հայելի է, որի մեջ ամեն մեկը ցույց է տալիս իր պատկերը:

Տաղանդը հասունանում է լռության մեջ, բնավորությունը կոփվում է կյանքի մրրիկներում: Լուրջ, խոր, իսկական կամքը բնութագրվում է ամենից առաջ նպատակին հասնելու վստահության պատկերացման հետ շաղկապվածությամբ:

Համոզված եմ, որ մեր հոգին իր բնույթով անխորտակ մի

էություն է, հավերժությունից հավերժություն գոյատևող ինչ-որ մի բան (Գ):

Դ. Կենսաբանություն, քիմիա և աշխարհագրություն

Բնությունը գազաններին սովորեցնում է ճանաչել իրենց բարեկամներին (Շ):

Շնչառության լավացումը սովորաբար բարձր ոգևորություն է առաջացնում:

Բնությունը գնում է իր ճանապարհով, և այն, ինչ մեզ բացառություն է թվում, օրինաչափ է:

Աշխարհը չէր կարող գոյություն ունենալ, եթե նա այդքան հասարակ չլիներ: Մի քիչ անձրև, մի քիչ արև, և յուրաքանչյուր գարուն ամեն ինչ նորից կանաչ է: Եվ այդպես միշտ (Գ):

Ե. Մաթեմատիկա, ֆիզիկա և ինֆորմատիկա

Եթե ես աշխարհին իմ մեջ կռահման ուժի միջոցով չկրեի, նշանակում է՝ տեսնող աչքերով կույր կմնայի, և իմ ողջ ուսումնասիրությունը, ողջ կենսափորձը կնմանվեին դատարկ ու մեռած աշխատանքի:

Ընդունակությունը ենթադրվում է նախօրոք, բայց այն պետք է դառնա հմտություն:

Ամեն ինչ անցնում, գնում է, ես արդեն այն չեմ, ինչ եղել եմ, բայց հնամենի երկիրը կանգուն է. և օդը, և ջուրը, և հողը միշտ նույնն են:

Մենք բոլորս էլ մեր մեջ ինչ-որ չափով էլեկտրական և մագնիսական ուժեր ունենք և մագնիսի նման կարող ենք ձգող ու վանող ուժեր դրսևորել (Գ):

ՈՒՂՂԱԽՈՍՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՈՒՂՂԱԳՐՈՒԹՅՈՒՆ

ՁԱՅՆԱՎՈՐՆԵՐԻ ԱՐՏԱՍԱՆՈՒԹՅՈՒՆԸ

2. Բարձրաձայն կարդացեք հետևյալ բառերը՝ ուշադրություն դարձնելով ձայնավորների ուղղախոսական սկզբունքներին:

Ա. Պատմություն և իրավագիտություն

Տարամետ, Ծերակույտ, քարեդարյան, համերկրացի, վրատիթ, համաերևանյան, ենթաօրենսդրական, Եռաբլուր, դռնբաց, դռնփակ, ձեռնպահ, քննել, քննվել, կողմնորոշում, ամբոխ, զորավիգ, քաջ-դրդի, գործելաոճ, հայորդի, Ողական, Ողիսև:

Բ. Կուլտուրա

Գեղարվեստական կրթություն

Եղերերգ, երփներանգ, մեներգ, շքերթ, զուգերգ, ձայներիգ, պարեղանակ, պարերգ, սքեմ, վերջերգ, ցայգերգ, առաջնատելոյթ, բեմել, արծաթերանգ, թեզանիք, կրկներգ, կնտնտոց, կորնթարդ, ծնծղա, բազմակնություն (բազմակին լինելը, շատ կանայք ունենալը), ներբող, սոնատ, սոնետ, բնորդուհի, ծափողջույն, նրբաոճ, հնաոճ, կոլորիտ, կլոր պար, գորգագործ, ամենատրակյալ, ոճ, ոսկեգույն:

Գ. Կրթության հոգեբանության և սոցիոլոգիա

Հեղգ, շփերթ, անելանելի, աներևակայելի, աներկյուղ, առերևույթ, ապերախտ, ամենատրտանիկ, երագ, երկվորյակ, երկրնտրանք, մտմտուք, սրտմտել, գրգռիչ, ընկճվել, փոքրոգի, հոգեվերլուծություն, անորոշ, պարզորոշ, հիպնոս, ռեցեպտոր, հոգեորդի, ոգի, ոգորում, որոշակի:

Դ. Կենսաբանություն, քիմիա և աշխարհագրություն

Ռնգեղջյուր, արևելք, տարերային, բևեռ, գոմեշ, երիկամ, խուռներամ, ծեգ, մակերիկամ, մակերևույթ, եղրևանի, շաքարեղեգն, շուրջերկրյա, երկնիտրատ, տարերք, մթնկա, լուսնկա, ստորերկրյա, ատոք, մթնոլորտ, անողնաշար, անձրևորդ, անոսր,

կրծոսկր, փղոսկր, ենթաորովայնային, ոսկրածուծ, ողնաշարավոր, միկրոտարր:

Ե. Մաթեմատիկա, ֆիզիկա և ինֆորմատիկա

Տասներեքերորդ, հիսուներկու, իններորդ, ութսուներորդ, տասներկու, տեղեկույթ, եռաչափ, եռանկյուն, երեսուն, հիդրոօդերևութաբանական, կենսադաշտ, կենսահոսանք, անոդ (դրական լիցքով էլեկտրոդ), չորրորդ, տասնչորս, քառորդ, որոշում, կիսաողորկ, կոտորակ:

ԵՐԿՆԶՅՈՒՆՆԵՐԻ ԱՐՏԱՍԱՆՈՒԹՅՈՒՆԸ

3. Բարձրաձայն կարդացե՞ք հետևյալ բառերը (բառակապակցությունները)՝ ուշադրություն դարձնելով երկհնչյունների (այլև ձայնավորական զուգորդումների) ուղղախոսական սկզբունքներին:

Ա. Պատմություն և իրավագիտություն

Կիլիկիա, Եդեսիա, Բյուզանդիա, Արծրունյաց, սոցիալիստական, միակնություն, Արմենի-Շուպրիա, ակադեմիա, արիացիներ, գիմնազիա, դեմոկրատիա, մոնոպոլիա, սոցիալիզմ, պատրիարք, քվեաթերթիկ, քվեարկել, քվեատուփ, քրեական, քրեաիրավական, քվեակազմ, քրեածին, քրեակատարողական, փորձաքրեագիտություն, քրիստոնեադեմոկրատական, լեգեոն, Նապոլեոն, քրեորեն, Բյուզանդիոն, գիլիոտին, նացիոնալիզմ, տոյժ, հերյուրանք, հերյուրել, հյուպատոս, փոխհյուպատոս, Եվրամիություն, գեներալ-լեյտենանտ, Վիետնամ, պրեմիեր մինիստր:

Բ. Կուլտուրա

Գեղարվեստական կրթություն

Գլոբալիզացիա, ակադեմիա, ռեպրոդուկցիա, մումիա, ալելուիա, հեքիաթ, ֆանտազիա, ալեգորիա, սիմֆոնիա, արդիական, Տյանոնդառաջ, արիա, իմիտացիա, մեդիադաշտ, միալար, Հայֆի-հարմոնիա, մելոդիա, բուտաֆորիա, օլիմպիադա, լյա մաժոր, լյա մինոր, քրիստոնեական, ռեալիզմ, սյուրռեալիզմ, մարիոնետ, ամբիոն, մարմարիոն, չեմպիոն, աբստրակցիոնիզմ, ռադիո, ռադիոընդունիչ, ռադիոլյազրոդ, ռադիոակնարկ, ադաջիո, տրիո, ստերեոհնչողություն, ստերեոձայնագրում, Լեոնարդո դա Վինչի, ակորդեոն, կապույտ, սնգույր, անպաճույճ, դաշույն, սյուն, բարեհնչյուն, գեղահնչյուն, դյուցազնավեպ, սիրուետ, տեսանյութ, մյուզիքլ, մյուռոնօրինեք, դուետ, կարիերա, պիես, պրեմիերա, Ռաֆայել:

Գ. Կրթության հոգեբանություն և սոցիոլոգիա

Տվայտանք, այլայլվել, ջղայնանալ, դաստիարակություն, սո-

ցիալական, ադապտացիա, անբարյացակամ, բարյացակամություն, հոգյակ, նյարդ, նյարդայնանալ, սոցիալ-կենցաղային, սոցիալ-տնտեսական, սոցիալ-հոգեբանական, ագրեսիա, աքսելերացիա, դեպրեսիա, էմոցիա, էնտուզիազմ, իմիտացիա, պսիխոլոգիա, օլիգոֆրենիա, իդեալ, իդեալականացում, միօրինակ, քամելեոնանման, զգույշ, բարեհամբույր, ուրույն, ինքնուրույն, թույլ, էություն, անհյուրընկալ, արյունռուշտ, արյունարբու, տաքարյուն, թյուրըմբռնում, թյուրիմացություն:

Դ. Կենսաբանություն, քիմիա և աշխարհագրություն

Օվկիանոս, քիմիա, լաբորատորիա, Ասիա (տեղանուն), Ուրմիա, էակ, կրիա, այծյամ, նավթաքիմիական, սառուցյալ, Վիկտորիա ջրվեժ, փասիան, ասիական, ասիացի, Ավստրալիա, ավստրալիացի, Փոքր Ասիա, փոքրասիական, թթվաալկալիական, փոշեմետալուրգիա, ալերգիա, դեմոգրաֆիա, մանրէաբանություն, ուրբանիզացիա, Մարիանյան կղզիներ, Հյուսիսային սառուցյալ օվկիանոս, միջօրեական, էակ, ամեոբա, քամելեոն, բրաբիոն, սամույր, առյուծ, արյուն, ձյուն, ձյութ, նատրիում, նյութ, ճայթյուն, սյուք, մրջյուն, լուսնեղջյուր, խտանյութ, Սիրիուս, բերրիություն, Վիեննայի անտառ (լեռնազանգված), Բուենոս Այրես, հակահարայելական, տիեզերք, տրեզերագնաց օդաչու:

Ե. Մաթեմատիկա, ֆիզիկա և ինֆորմատիկա

Երկու անհայտով հավասարում, վայրկյան, հնգյակ, միլիարդ, էներգիա, դիֆերենցիալ հավասարում, էլեկտրաէներգիա, ինֆորմացիա, ֆունկցիա, աքսիոմ, միլիոն, տրիլիոն, Գալիլեո Գալիլեյ, թեորեմ, հարյուր, Նյուտոն, աղյուսակ, Պյութագորաս, ուղղանկյուն, եռանկյուն, դյույմ, հարյուրյակ, երեք հարյուր, երկու հարյուրերորդական, հինգհարյուրերորդ, ութ միլիոն, ութհարյուրերորդ, բյուր, Գյումուշեկ, Նեյմանի խնդիր:

ԲԱՂԱԶԱՅՆՆԵՐԻ ԱՐՏԱՍԱՆՈՒԹՅՈՒՆԸ

4. Բարձրաձայն կարդացե՞ք հետևյալ բառերը՝ ուշադրություն դարձնելով բաղաձայնների ուղղախոսական սկզբունքներին:

Ա. Պատմություն և իրավագիտություն

Ձերբակալել, հափշտակել, խաբեբա, սպրդել, հուշադրյուր, պարգևատրել, մոգպետ, կարգ, ազգօգուտ, թագուհի, վարկաբեկել, քաշքշուկ, երաշխիք, խարդավանք, արգելանք, աշխատակարգ, արգելաքվե, կարգավիճակ, վարչակարգ, թնդանոթածություն, կենտրոնաձիգ, հոգաբարձու, ատյան, արդար, բերդ, դրդել, դրդապատճառ, երդում, պատճառ, ջարդ, Տրդատ, Վարդանանք, սաղավարտ, Արևմտյան Հայաստան, հաշվեհարդար, դիտորդ, երդմնազանց, երդվյալ, զինադադար, ստահող, Հազկերտ, արձանագրություն, ուղերձ, հարձակում, կցկտուր, հուշարձան, անթաքույց, միջնորդ, ազգամիջյան, ամբողջատիրություն, զիջել, զոջալ, կտրիճ (խիզախ), անտերունչ, մեղսակից, խողխողել, կեղծիք, մեղսագործ, գաղթ, գաղտնալսում, ուխտ (դաշինք), Շահանդուխտ, ժխտել, նախճիր, ամբաստանել, իրավամբ, ամբարիշտ, փամփուշտ, Սամվել, անփառունակ, զավթել, հարավային, բռնաշորթում, փորձագետ:

Բ. Կուլտուրա

Գեղարվեստական կրթություն

Նրբագեղ, նրբահնչյուն, ողբասաց, ողբերգակ, ներբող, երփնավառ, գրաբար, ծոպավոր, երգարան, մուգ, դրվագ, բագին, բուրգ, գորգ, զուգերգ, քնարերգու, ժամերգություն, համերգ, մոգ, նվագ, եղերերգ, երգահան, համանվագ, մարգարտազարդ, սգերթ, Վարդավառ, ակնազարդ, ակորդ, գեղարդ, Նավասարդ, աղոթք, շքերթ, հակինթ, թատերական, խրտվիլակ, զարդանախշ, զարդարանք, զարդաքանդակ, լաջվարդ, վարդագույն, մատյան, հեռուստատեսություն, դյուցազուն, Դյումա-հայր, Դյումա-որդի, ակորդեոն, ռապսոդիա, երաժշտություն, դերձան, դերձակ, վրձին, վրձնել, վրձնահարված, հանդերձարան, ընթեր-

ցարան, աճապարար, պճնազարդ, դարչնազույն, առաջնելույթ, ծաղկաշղթա, առեղծված, խեղկատակ, փողիար, փողք, տավիղ, նախշ, ամֆիթատրոն, գմբեթ, սիմֆոնիկ, լուրթ, մարմար, կարկառուն, ասվյա, տավղահար, սֆինքս:

Գ. Կրթության հոգեբանություն և սոցիոլոգիա

Համբերել, սփոփել, ինքնախաբեություն, խաբկանք, կոպտել, հոգի, ոգևորել, օգնել, հարգանք, փափագ, բարք, վարք, հեղգ, հայեցակարգ, հանրօգուտ, հոգեբույժ, հոգեբան, հոգեհմա, վարկաբեկել, դաստիարակ, դաստիարակել, բարդ, ընդունակ, մարդ, նյարդ, կենդանի, վրդովել, խրթին, սրդողել, բարդույթ, նյարդայնանալ, դիագրամ, կոլեկտիվ, արդյունք, կրթություն, զվարթ, վարձ, վարձատրել, հարձակվել, փորձ, փորձություն, մեկամաղձոտ, մտացածին, խառնվածք, անուրջ, երջանիկ, գիշողամիտ, անգիջում, զղջալ, ողջախոհ, աչալուրջ, խառնիճաղանջ, խիղճ, խեղճ, տաղտուկ, քաղքենի, իղձ, մեղմ, մղձավանջ, բախտ, ամբարտավան, ամբարիշտ, ինքնամփոփ, դյուրըմբռնելի, անփույթ, կարծիք, ջղագրգիռ, հանդուրժել, շահագրգիռ, սարսռազդու, խռովք, ռեֆլեքս:

Դ. Կենսաբանություն, քիմիա և աշխարհագրություն

Արբանյակ, ամպրոպ, արփի, թփուտ, բնօգտագործում, շամբուտ, ծեգ, շոգ, էգ, ծագել, ճրագու, զարգանալ, զույգ, արեգ, մարգագետին, շոգի, Գուգարք, երկինք, պատյան, լյարդ, բուրդ, հյուսիսարևմտյան, դդում, կենդանի, կոկորդ, վաղորդյան, վարդ, ընդարձակ, խլուրդ, սարդ, սաղարթ, դեղձանիկ, օձ, Մերձբայթիկա, մերձավորարևելյան, փայծաղ, սառցակալել, աղջամուղջ, միջատ, չղջիկ, բողբոջ, լուսնեղջյուր, Միջագետք, միջինասիական, արջ, ոջիլ, ալոճենի, աչք, մոնջյուն, ծաղկել, գուղձ, պղպջակ, պղտոր, պողպատ, տուղտ, ուղտ (կենդանի), բողբոջ, սպանախ, լեռնաշղթա, Ծաղկանց լեռներ, Ծաղկունյաց լեռնաշղթա, Դուշանբե, ամպրոպ, սմբուկ, արծիվ, արծաթ, գրգիռ, մամուպատ, նավթ, Աղվանք, օվկիանոս, Աֆղանստան, հարավ, հարավային:

Ե. Մաթեմատիկա, ֆիզիկա և ինֆորմատիկա

Սրբագրել, ձգողականություն, սարդել, համակարգիչ, համակարգում, ալգորիթմ, թարգմանիչ, թարգմանություն, դիցուք, արքսիում, սարքավորում, մաթեմատիկոս, արդյունք, արդյունաբերել, դադար, խնդիր, հաջորդական, վեցերորդ, տասնութերորդ, միլիարդ, վաթսուն, վոլտ-ամպեր, վոլտմետր, պատճենահանել, խնդրագիրք, բացարձակ, ատաղձագործ, բարձր, լիցքավորում, առաջմղիչ, առաջմղում, ջերմամիջուկային, առաջին, ձեռնարկչություն, սեղմասկավառակ, տեղեկույթ, տեխնոլոգիա, մեխանիկա, սեղմել, խախտել, ինֆորմատիկա, ինֆորմացիա, ամփոփել, երեսուն, երեսուներորդ, երեսնական, երկրորդ, երկրորդական, թույլատրելի, ավտոսարքավորում:

5. Բարձրաձայն կարդացե՛ք և առանձնացրե՛ք այն բառերը (բառակապակցությունները), որոնցում գրվող հ-ն «համր» տառ է (չի արտասանվում):

Ա. Պատմություն և իրավագիտություն

Աշխարհասփյուռ, արհավիրք, գահ, զրահ, գրոհ, ընդհատակյա, հրահրել, նախագահ, Գարեգին Նժդեհ, սեպուհ, համհարզ, հաշվեհարդար, առիվատյաց, աշխարհազոր, գահընկեց, Խորհրդային Հայաստան, Ծովաց աշխարհ, վեհարան, Վոստրյակովի արքա, թիկնապահ, պարտամուրհակ, աշխարհաքաղաքական, զրահատանկային, էքսնախագահ, կազմխորհուրդ, հետհեղափոխական, շահնշահ, ռազմահայրենասիրական, քաղխորհուրդ, Շապին-Գարահիսար, Եվրախորհրդարան, ետխորհրդային, երկրապահ, խորհրդատու, խորհրդատվություն, ընտրահնարք, իրավապահ:

Բ. Կուլտուրա

Գեղարվեստական կրթություն

Դիոլ, երգեհոն, օդիունչ (գործիք), պատկերասրահ, արիեստ, աշխարհահռչակ, աշխարհիկ, բարեհնչյուն, գեղահնչյուն, հա-

մահնչյուն (ծայն), բնորդուի, թմբկահարել, մարզահամերգային, մեռնօրինեք, միջինհայերենյան, սգահանդերձ, տավղահար, տնօրինեք, Բեթովեն, դազգահ, օրիներգ, դերասան-դերասանուի, խաչհամբույր, շրթհարմոն, տեսահոլովակ, ֆոտոցուցահանդես, «Շահնամես, Շոպենհաուեր, Օ'Հենրի, Մյունխհաուզեն, երաժշտահան, հեռուստահաղորդաշար, համաշխարհայնացում, շնորհանդես, թանգարան-ցուցահանդես:

Գ. Կրթության հոգեբանություն և սոցիոլոգիա

խոնարհ, խորհուրդ, արհամարհել, նիրհել, աշխարհայացք, ժպիրհ, ծնողխորհուրդ, ագահ, անհատ, դժգոհ, գռեհիկ, ընդհանուր, վստահ, անհողողող, ապաշնորհ, անշնորհք, ընդհատվել, խոնարհաբար, խորհել, շահագրգռել, սահմուկել, պատմահասարակական, բղջխխոհ, թոհուբոհ, խոնարհվել, խորհրդածել, խորհրդածություն, հեղիեղուկ, վեհանձն, վերիուշ, քամահրանք, քամահրել, խորհրդակցել, պատեհապաշտ, ընդհակառակը, ընդհանուր, անհրաժեշտ, արգահատելի, հոգեհմա, հաղթահարել, շնորհակալություն, շնորհալի, աշխարըմբռնում, բարոյահոգեբանական, դժվարհիշելի:

Դ. Կենսաբանություն, քիմիա և աշխարհագրություն

Հայաստան աշխարհ, աշխարհագրական դիրք, ճահիճ, սարահարթ, Հարդագողի ճանապարհ, մահ, հրդեհ, նյութերի անընդհատ տեղափոխություն, սահման, միրհավ, բջիջների տրոհում, ալեհույզ, ահյակ, ջրահեղձ, ուղղահայաց, Թեհրան, ճահճուտ, մրկկահողմ, քարհանք, կենսաաշխարհագրություն, աշխարհագրագետ-ճանապարհորդ, աշխարհեաշխարհ, բյուրեղահիդրատ, լեռնահորատանցում, մրջնալդեհիդ, պատմաաշխարհագրական, բնապահպանություն, տարաշխարհիկ, ափհանում:

Ե. Մաթեմատիկա, ֆիզիկա և ինֆորմատիկա

Երեքհարյուրերորդ, չորսհազարական, հինգհարյուրական, բետա-տրոհում, երեքհազարերորդ, երկուհարյուրերորդ, ինն-

հարյուրերորդ, չորսհազարերորդ, էլեկտրահաշվիչ, միկրոհաշ-
վիչ, ֆիզիկաաշխարհագրական, ֆինանսահաշվային, Գյումուշ-
հէկ, համաշխարհայնացում, համընդհանրացում, «Համընդհա-
նուր թվաբանությունե, հանրահաշիվ, պահ, անընդհատություն,
Գոդֆրիդ Վիլհելմ Լեյբնից, անհրաժեշտություն, ընդհատում,
ծանր միջուկի տրոհում:

ՁԱՅՆԱՎՈՐՆԵՐԻ ՈՒՂՂԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ

6. Կետերի փոխարեն գրեք և կամ է:

Ա. Պատմություն և իրավագիտություն

Հնում հունգարները՝ միանգամայն ռազմատ..նչ մի ազգ, երբ..ք թշնամիներին չ..ին սպանում, եթ.. նրանք սկսում ..ին գթություն աղերսել (ՄՄ): Երբ Աքիլլ..սը մանուկ էր, մայրը, կրնկից բռնած, նրան մտցրել էր Հադ..սի թագավորության ստոր..րկյա Ստիքս գ..տի մեջ, որից նա դարձել էր անխոցելի, բացի կրնկից (ՍԻ): Մինչև 18-րդ դարը որոնում ..ին ..լրորադո երկիրը, բայց այդպ..ս էլ չգտան, իսկ անվանումը դարձավ թևավոր խոսք՝ առատության տ..ղի իմաստով (ն. տ.): Կ..սարը, չնայած հոռմ..ական ս..նատի արգ..լիքին, իր լ..գեոններով անցնում է Ռուբիկոն գ..տը: «Ռուբիկոնն անցնել» նշանակում է կատարել կտրուկ քայլ, ..ական շրջադարձ (ն. տ.): Փոխաբ..րական իմաստով «Հաննիբալի երդում» նշանակում է հաստատ մնալ մի որև.. սկզբունքի (ն. տ.): «Պ..տությունն այդ ես եմ» արտահայտությունն օգտագործվում է այն մարդկանց վերաբերյալ, ովքեր կարծում են, որ իրենք ամենա..ական ու կարևոր մարդն են այս կամ այն գործում (ն. տ.): Ինչպ..ս ..դգար, այնպ..ս էլ ..տելրեդ Երկրորդ թագավորի օր..նքներում հիշակատվում է երկակի և եռակի դաժան դատական փորձությունների մասին (էԵ): ՀՀ Սահմանադրության 2005 թ. նոյ..մբ..րի 27-ի փոփոխությունների շնորհիվ Հայաստանում ոչ միայն ..ապ..ս ուժ..ղացավ սահմանադրական արդարադատությունը, այլև հիմքեր ստ..դծվեցին վարչական արդարադատության ինստիտուցիոնալացման համար, որովհ..տև այդ փոփոխությունների հ..տևանքով հստակոր..ն սահմանվեցին սահմանադրական դատարանին դիմելու իրավունք ունեցող սուբյեկտների ցանկը, այդ դատարանին ենթակա գործերի շրջանակը (ԳՊ):

Բ. Կուլտուրա

Գեղարվեստական կրթություն

Իրենց հնչ..րանգով ..ական գործառույթ են ունեցել եղջ..-րափողերը: Պղնձ.. և եղջյուր.. փողերի հնչ..րանգային տարբ..-րությունները հնարավոր է դիտարկել փողային նվագարանի գործառույթային բազմազանության շրջանակներում (<<, <Ա): Վաղ միջնադարում օրվա ժամ..երգությունները կատարվում ..ին նույն ձայն..ղանակի շրջանակներում (ՄՆ): Հնում որք..րգությունը նոխագ..րգություն էր՝ Դիոնիսիոսին (հայկ. Սպանդարամ..տին) նվիրված տոնակատարությունների ժամանակ կատարվող ծիսա-կատարությունը: Հետագայում այն հաստատվել է որպես եղ..ր-..րգություն՝ սգո հիշատակություն և թաղման ծ..սերին կապվող գործողություն, որի ժամանակ լալկան կանանց գլուխ է անցել եղ..րամայրը և դարձել պարագլուխ (<<): Խմբավորվում են ժանրերի մի շարք տ..սակներ, որոնք խորհրդային ժուռնա-լիստիկայում ընդունված էր բաժանել երեք հիմնական խմբի և տասն..րեք տ..սակների. 1. տ..ղ..կատվական (լուր, հարցազրույց, հաշվ..տվություն, ռ..պորտաժ), 2. վերլուծական (թղթակցություն, հողված, նամակ, բաց նամակ, տ..սություն, մամուլի տ..սություն), 3. գ..ղարվ..ստահրապարակախոսական (ակնարկ, պամֆլ..տ, ֆ..լիետոն) (ԼԿ): Փաստորեն արվ..ստաբանությունը ոչ թե «մա-քուր գիտություն» է, այլ «հոգևոր հայր..նիքի» կառուցման ու հիմ-նավորման գիտական գործուն..ություն, որն ..ապես իրակա-նացվում է հրապարակախոսությամբ (ԱԳ): Ո՛չ Առնոլդ Բյոկլինի անհանգստությամբ համակված կտավները, ո՛չ Ֆ..րդինանտ Հոդլ..րի ան..ացած կ..րպարները, ո՛չ Ֆոն Շտուկի մարմնականի ակնհայտ գ..րակայմամբ գործերը չ..ն ոգ..շնչել Սուր..նյանցին (ՄՄԿ): Մոդ..ոն ոճի և սիմվոլիզմի ..ջերից քաղած դասերը, փայլուն վարպ..տությամբ մշակված, բացահայտվում են Սու-ր..նյանցի գլուխգործոցներից «Շամիրամն Արա Գ..ղ..ցիկի դիակի մոտ» կտավում (1899) (ն. տ.):

Գ. Կրթության հոգեբանություն և սոցիոլոգիա

Առ..նո Զակոբ Լևին սոցիալ-հոգ..բան և հոգ..բույժ է, սոցիոմ..տրիայի հիմնադիր: Անձը՝ որպ..ս կ..նսաբանական և սոցիալական ..ակ, գործուն..ության ընթացքում դրսևորում է իր հոգ..բանական առանձնահատկությունները, որոնք կ..նսափոճի հետ մ..կտեղ դառնում են անձի կառուցվածքի կարևոր բաղադրիչներ (ԱԼ): Եթ..բացասական ..ն..րգիան և եռանդուժը համաժամանակյա դուրս չ..ն մղվում, կարող են առաջանալ հոգ..սոմատիկ հիվանդություններ և հոգ..նևրոզներ (ԿՍ, ՌՀ): Ըստ ..ության երևակայամոլությունը շիկացնում է կրքերն այնքանով, որքանով իրական են հանգամանքները (ն. տ.): Նպատակահարմար չէ օգտագործել վիրավորական խոսքեր կամ բարձրացնել ձայնի հնչ..րանգը, երբ..մն նախընտրելի է խոսքի մեջ մտցնել հ..գնական ինտոնացիա (ն. տ.): Նշանավոր հոգ..բան ..լկոնինը տարբ..րակել ու բնութագրել է դպրոցական համակարգված ուսուցման հիմնական առանձնահատկությունները (ՆԱ): Հոգ..բանության կարևորագույն սկզբունքներից է գործուն..ության ընթացքում անձի հոգ..կանի զարգացման սկզբունքը, իսկ մարդկային գործուն..ության հիմնական տեսակներն են խաղը, ուսուցումը և աշխատանքը (ԼՄ):

Դ. Կենսաբանություն, քիմիա և աշխարհագրություն

Հ..տազոտությունների մորֆոլոգիական մ..թողները լայնորեն կիրառվում են կ..նսաբանության տարբեր ճյուղերում՝ կ..նդանաբանության, հն..աբանության մեջ և այլն:

Չադի Հանրապ..տության կ..նդանաբանական աշխարհին բնորոշ են փիղը, ռնգ..ղջյուրը, գոմ..շը, գ..տերում՝ կոկորդիլոսը, գ..տաձին և այլն: Շատ են մող..սներն ու միջատները:

Նիտրազլիկոլը (..թիլենզլիկոլ - ..րկնիտրատ, գլիկոլ..րկնիտրատ) պայթուցիկ նյութ է, ..թիլենզլիկոլի և ազոտական թթվի էսթ..ր, որն անգույն, յուղանման ցնդող հ..ղուկ է:

Յողը և նրա լուծույթները մանր..ասպան են:

Ոսկին դ..ղնափայլ մ..տաղ է, ջերմության և ..լ..կտրակա-նության լավ հաղորդիչ:

Նոր Զ..լանդիայի գ..տերը ջրառատ են և հարուստ հիդրո..ն..րգիայի պաշարներով (ՀՍՀ):

Միջ..րկրական ծովում է գտնվում Կիպրոս կղզին, նրա վրա էլ տարածվում է Կիպրոսի Հանրապ..տությունը:

..գեյան ծովի ափին է գտնվում նավահանգստային Իզմիր քաղաքը: Այն հիմնադրվել է մ. թ. ա. 2-րդ հազարամյակում որպ..ս ..ոլիացի հույների գաղութ (ԼԽ):

Ե. Մաթեմատիկա, ֆիզիկա և ինֆորմատիկա

Ն..պերը՝ շտուլանդացի մաթ..մատիկոսը (լոգարիթմների ստ..դճողը) սովորել է ..դինբուրգի համալսարանում:

Մեն..րանգ լույսն աչքով անմիջականորեն ընկալելի հաճախականությունների տիրույթի մեջ մտնող որոշակի և խիստ հաստատուն հաճախականության ..լ..կտրամագնիսական ալիքն է:

Մոնտ..-Կարլոյի մ..թողը բուռն թափով սկսեց զարգանալ ..լ..կտրոնային հաշվողական մ..ք..նաների երևան գալուց հետո և սկզբում կիրառվում էր ճառագայթման տեղափոխման ու նեյտրոնային ֆիզիկայի բարդ խնդրիների (որոնց նկատմամբ դասական թվային մ..թողները կիրառելի չ..ին) լուծման համար:

Ն..ռնստը՝ գերմանացի ֆիզիկոսը, ձևակ..րպել է թ..րմոդինամիկայի երրորդ սկզբունքը: 1894 թ. ցույց է տվել, որ լուծիչի դիսոցող ունակությունը մեծանում է դի..լ..կտրիկ թափանցելիության աճին զուգընթաց և հայտնաբ..րել ..լ..կտրաստրիկցիայի երևույթը:

..լ..կտրական շարժիչները լայն կիրառում են ստացել միայն XIX դ. 70-ական թթ. ..լ..կտրա..ներգիայի ..ժանագին աղբյուրներ ստեղծելու շնորհիվ: 1888-89 թթ. Մ. Դոլիվ-Դոբրովոլսկին հնարել է ..ռաֆազ կարճ միացված ասինխրոն ..լ..կտրական մ..քենա (ՀՍՀ):

7. Կետերի փոխարեն գրեթ օ կամ ո:

Ա. Պատմություն և իրավագիտություն

..դիսական պ..եմում նկարագրվում են տրոյական պատերազմի հեր..ս ..դիսևսի ան..րինակ քաջագ..րծություններն ու

ճանապարհ..րդությունները (ՄԻ): Տիգրան Մեծի և Արտավազդ Երկրորդի ու նրանց ժամանակի մասին վկայում են հին աշխարհի ..տար շատ պատմիչներ՝ Հուստին..սը, Ապիան..սը, Ստրաբ..նը, Պլուտարք..սը, Դի..դոր..սը և ուրիշներ, ինչպես նաև Մ..վեստ Խ..րենացին ու Փավստ..ս Բուզանդը (ՌԻ): Պ..նտ..սի հույն ազգաբնակչությունը, Հունաստանից և հունական մշակույթից մեկուսացված լինելով, ապրելով հյուրընկալ Պ..նտ..սի, այսինքն՝ Սև ծ..վի ավազանում, ունեցել է բազմերանգ, յուր..րինակ ավանդույթներով համեմված մշակույթ ու կենցաղ (ՄԱԿ): Ամբ..ղջական ..րենսդրական ժ..ղ..վածու այդպես էլ մինչև Մ. Գ..շը գ..յություն չի ունեցել: ..ձնեցու «Կան..նագիրք Հայ..ցը» չի կարելի ընկալել որպես իրավահարաբերությունները համակողմանի..րեն կարգավ..րող ժ..ղ..վածու (ԳԱ): Փաստ..րեն կանանց, երեխաների ան..րինական փ..խադրումները և նրանց շահագ..րծումը տեղի են ունենում որ..շակի փոխհամակցված ..ղակների կամ տարրերի միջ..ցով (ԲԲ): Վարչական դատարանում կ..ղմերի իրավահավասարության հիման վրա ընթացող դատական քննության մրցակցության սկզբունքը Հայաստանում այս..ր անվիճելի..րեն ընդունված է որպես այդ ընթացակարգի կառուցման ձև, մեթ..դ (ԳՊ):

Բ. Կուլտուրա

Գեղարվեստական կրթություն

Ս. Ստեփան..ս Սյունեցին Ավագ ..րհնություններն ստեղծելիս կամ դասակարգելիս նախ..րինակ ուներ Մարգարեական ..րհնությունները երգելու հնավանդ ձևը, ապա նաև Հարության հարցնակարգերի ձայնեղանակային միատարր նկարագիրը: Ավագ ..րհնությունների ստեղծումը բնիկ տեղային ավանդույթի շարունակությունն էր ընդամենը, այլ ոչ ..տար ժ..ղ..վածուների նմանակում, ժանրային ավանդույթի կրկն..րինակում (ՄՆ): Մուլտիպլիկացիոն կին..ն կին..արվեստի մի տեսակ է, որի երկերն ստեղծվում են նկարված կամ ծավալային ..բյեկտների շարժման

առանձին հաջ.րդական փուլերի նկարահանմամբ (<Ս>): «Սա-
յաթ-Ն..վան» արևելյան շքեղ ..րնամենտիկայի շտեմարան է:
Փարաջան..վն այն փ..րձեց վերածել կին..յի: Նա հիմնվեց Սա-
յաթ-Ն..վայի ստեղծագ..րծության մ..զաիկայի, հայկական միջ-
նադարյան և բիրլիական սիմվ..լների վրա: Եվ թ..դ տար..րինակ
չթվա, եթե ասենք, որ դրանով Փարաջան..վը փորձեց ստեղծել
սյուժե (ԷԱ): Կերպարվեստի և քանդակագ..րծության բնագավառում
էտյուդ նշանակում է «նախնական ուրվագիծ՝ ուրվանկար ապագա
կտավի՝ նկարի, քանդակի կամ նրա մի հատվածի համար, որ..նք
կատարված են բն..րդից»: Կերպարվեստի մեջ էտյուդը նաև
մարզանքի ձև է՝ «բն..րինակից կատարված նկար» (ԼԽ): Մ..դեռնի
գծերը Վարդգես Սուրենյանցի արվեստում հանդես են գալիս ան-
ս..վոր դիտակետով, ռճավ..րված ..րնամենտի հարուստ կիրառ-
մամբ, կ..մպ..զիցիայի ասիմետրիկ կառուցմամբ, հարթայնության
ձգտմամբ (ՄՄԿ):

Գ. Կրթության հոգեբանություն և սոցիոլոգիա

Սթրեսային ան..գնական հ..գեվիճակում հայտնված ծնողի
վիճակն ազդում է ընտանիքի հ..գեբանական մթն..լորտի վրա
և մեծանում է երեխայի՝ «քավության ն..խագ» դառնալու ռիսկը
(ԱՕ): Դիրք..րոշումը չգիտակցված վիճակ է, որի ..գնությամբ
կարելի է բավարարել այս կամ այն պահանջմունքը (ԱԼ): Անհատի
կյանքի սցենարը կազմված է իր հարազատների, մասնավ..-
րապես ծնողների ակտիվ մասնակցությամբ, և այս..ր անհատն
ապրում և ..րոշումներ է կայացնում ըստ այն դիրք..րոշումների,
որոնք նրանում ձևավորվել են մանկության տարիներին և
անհրաժեշտ են եղել կենսագ..րծունեության պահպանման
համար, որ..նք մինչդեռ արդիական չեն հասուն մարդու համար
(<Ծ>): Առ այս..ր չկա որևէ «ճիշտ» սահմանում, որը կբն..րոշի
..ժտված երեխային (ՄԱ): Հարկ է տարբերակել այն ..բյեկտիվ
և սուբյեկտիվ գ..րծոնները, որ..նք ներքաշում են մարդկանց
կ..նֆիկտային գ..րծողությունների ոլ..րտը (ԿՍ): Ամուսնական

դաշինքի կնքումը, բացի ..րենքով սահմանված կան..նաձևից, այս..ր նաև ուղեկցվում է պսակադրության արարողությամբ, որի նկատմամբ վերաբերմունքը մեր իրականության մեջ կարծես որ..շակի կարծրատիպային մտածողություն է ձևավորում (պարտադիր արարողություն հարսանեկան տ..նախմբության կառուցվածքում) (ԱԶ):

Դ. Կենսաբանություն, քիմիա և աշխարհագրություն

Մրրկահավերը մ..ն..գամ են, սնվում են ծ..վային ան..ղնաշարավ..րենքով, ձկներով, ձկն..րսության թափ..ններով:

Մումիոն կամ լեռնային բալասանը բնական ծագման կենսաբան..րեն ակտիվ նյութ է, որը պարունակում է մեծ քանակությամբ ..րզանական և ան..րզանական նյութեր, հիպուրաթթու, ամփ..նաթթու, խեժեր, մ..մանյութ, բուսական մնաց..րդներ և միկր..տարրեր:

Մուտագենները լայն..րեն ..գտագործվում են գյուղատնտեսական բույսերի և ..գտակար միկրո..րզանիզմների սելեկցիայում:

Մուտացիաներն ..րզանիզմի ժառանգական հատկանիշների բնական..րեն կամ արհեստական..րեն առաջացող փ..փ..խություններն են, որ..նք տեղի են ունենում քր..մ..ս..մներում ու գեններում ժառանգական նյութի վերակառուցման և խանգարման հետևանքով (ՀՍՀ):

Քաղաքներ կան, որոնք կրում են հռ..մեական կայսրեր ..գոստ..սի և Մարկ..ս Ավրելիոսի անունները: Այսպես, Իսպանիայի հյուսիս-արևելքում է գտնվում Սարագ..սա քաղաքը (Արագ..ն պատմական մարզի կենտր..նը): Քաղաքը հիմնադրել են հռ..մեացիները մ. թ. ա. առաջին դարում և ի պատիվ ..գոստ..ս կայսեր այն կոչել են «..գոստ..ս կայսեր քաղաք»: Իսկապես որ առաջին հայացքից Սարագ..սա բառը կապ չունի ..գոստ..ս կայսեր անվան հետ: Հնչյունական կազմի այդ..րինակ փ..փ..խություն է կրել Մարկ..ս Ավրելիոս կայսեր անունով հռչակված ամր..քը, այնուհետև քաղաքը՝ ..ռլեանը (ԼԻՍ):

Ե. Մաթեմատիկա, ֆիզիկա և ինֆորմատիկա

Ըստ ավանդության՝ հույն մեծ մաթեմատիկ...ս Արքիմեդը, լծակի ..րենքը հայտնաբերելով, իբր բացականչել է. «Տվե՞ք ինձ հենակետ, և ես երկիրը կշրջեմ»: Այստեղից էլ տարածվել է արտահայտությունը, որն ..գտագործվում է ընդհանրապես շարժման ուժը բն..րոշելիս (ՍԻ):

Մրրկային շարժման ..րինակներ են ..դային մրրիկները մթն... լրտում՝ պտահ..դմերը և ցիկլ..ները, կամրջակալների ետևում առաջացող ջրային մրրիկները, ջրում գ..յացող ձագարափ..սերը:

Նյուտ..նը՝ անգլիացի ֆիզիկ..սը և մաթեմատիկ..սը, «Լույսի և գույների տեսություն» աշխատանքում նկարագրել է Նյուտ..նի ..ղակներով փ..րձը և հաստատել լույսի պարբերականությունը:

Նեյտր..ների կլանիչներն ..գտագործվում են ռեակտ..րի կառավարման (ավելցուկային նեյտր..ները կլանելու, ռեակցիան արագ..րեն դանդաղեցնելու) համար:

Շեն..նի թեորեմները (Կլ..դ Էլվուդ Շեն..նի անունով) ինֆ..ր-մացիայի տեսության հիմնական թեորեմներն են, որ..նք վերաբերում են այնպիսի կապի գծերով ինֆ..րմացիայի հաղորդմանը, որտեղ առկա են աղմուկներ:

Շարժման քանակի ..րենքն ..գտագործվում է մեխանիկական խնդիրների լուծման համար, ինչպես նաև հարվածի երևույթն ուսումնասիրելիս (<Ս>):

Ե.Կետերի փոխարեն ըստ անհրաժեշտության գրե՞ք ը տառը:

Ա. Պատմություն և իրավագիտություն

Խորհրդահայ պատմագրությունը, հաղթահարելով բազմաթիվ գաղափարական խոչ..նդոտներ, Սարդարապատի հերոսամարտը համարել է բախտորոշ իրադարձություն հայոց բազմադարյան պատմության մեջ, հայոց նորագույն վերածն..նդի ..սկիզբը (ԱԱ): Առաջարկված զրահապատ մեքենաների հնարավորությունների ..ստուգման համար 1906 թ. կազմվում է համապատասխան հանձ-

նաժողով, որի կազմում ..նդգրկվում է նաև գեներալ Մ.գրերովը: Այդ հանձնաժողովը գործել է մինչև Առաջին ավտոմոբիլային պատերազմի ..սկիզբը և մեծ ներդրում է կատարել ռուսական ավտոմոբիլային զորքերի ձևավորման գործ..նթացում (ԿՓ): Քննարկվում են Հայաստան-Ռուսաստան հարաբերությունները որպես եվրասիատեգրման այլ..տրանք: Ռուսաստան-Արևմուտք հակադրությունը դարձել է կարևոր գործոն հետխորհրդային երկրների ժողովրդավարական փոխակերպումների համար, բայց հաճախ խոչ..նդոտում է այդ գործ..նթացներին և համագործակցությանը: Զարգացման եվրոպական ուղու ..նտրությունը պատահական չէ, այլ պայմանավորված է եվրոպական հոգևոր և մշակութային-պատմական առ..նչություններ և աշխարհայացքային արժեքային նմանատիպ կողմնորոշումներ ունեցող հայ ժողովրդի հասարակական գիտակցությամբ (ՎՄ): 1915 թ. փետրվարի կեսերին խմբապետ Խումարցի Պետրոսի ..սպանությամբ Շատախում դեպքերը գահավեժ ..նթացք ստացան (ԱՄ): Մարտի դաշտում, առաջին շարքերում մարտ..նչելով ու զոհվելով, նահատակները դառնում էին մարտիրոսներ և շատ հաճախ դասվում սուրբ նահատակաց շարքը որպես հավատքի ու հայրենիքի անկախության համար ..նկած վիրավորներ (ԼԽ): Ըստ Նժդեհի, դպրոցը երիտասարդ սերնդի դաստիարակության, կրթության գործ..նթացը լավագույնս կազմակերպելու համար պետք է ապահովի առարկայի մատուցման ..ստեղծագործական, ..զգացմունքային եղանակ (ՎԱՀ):

Բ. Կուլտուրա

Գեղարվեստական կրթություն

Անցյալի իմացությունը որպես ազգային արդի գիտակցության հիմք ..նդունելու ..սկզբունքը Գարեգին Հովսեփյանը գործնականում իրականացնում է արվեստաբանությամբ (ԱԳԿ): Ինչպես գեղանկարչության որոշակի ուղղությունների պատկանող ..ստեղծագործությունների մեջ կտավի կոմպոզիցիան, գունահարաբերումն ..ստեղծում են բովանդակություն բացահայտող միջոցներ,

այնպես էլ «Նռան գույնը» ժապավենի մեջ կադրի կոմպոզիցիան, նրա գեղանկարչական տեսքն ինքն..ստինքյան ..ստանում են բովանդակության նշանակություն (ԷԱ): Կրկեսում կասկադ է կոչվում սրարշավ ..նթացող ձիու վրայից մարզիկի անկումը կամ ..նկնելու տպավորություն ..ստեղծելը: Օպերետում կասկադ է համարվում «երգով ուղեկցվող սր..նթաց պարը» (ԼԽ): Կոնցերտը հորինված է թեմայի և վարիացիաների ձևով, ինչն ակ..նհայտորեն մոտ է ջազային կատարողական ավանդական եղանակին: Տվյալ դեպքում Էդգար Հովհաննիսյանն իր վեց վարիացիաներում բավական ազատ է զարգացնում թեման, երբեմն ..զգալիորեն հեռանալով ..սկզբնաղբյուրից: Թեմային նախորդում է ցայտուն և ..նդարձակ մի նախաբան, որն անմիջապես ..ստեղծում է ջազային մթնոլորտ «սվինգային» ռիթմի շնորհիվ: Վարիացիայի ավարտին մենակատարի արդեն բավականին զարգացած գիծը շարունակվում է ազատ ծավալվել՝ միացնելով առաջին և երկրորդ վարիացիաները: Դրանք ներկայացնում են մեկ ..նդիանուր հոսք, որի տրամաբանական ավարտը համ..նկնում է կոնցերտի առաջին կուլմինացիային՝ նախաբանը հիշեցնող նվագախմբային դրվագի տեսքով: Ակ..հայտ է վեցերորդ վարիացիայի եզրափակիչ նշանակությունը (ՇԳ):

Գ. Կրթության հոգեբանություն և սոցիոլոգիա

Բ. Տեսլովը պարզել է յուրահատուկ առանձնահատկությունների միասնության խնդիրը, ինչպիսին են արագ մտածողությունը, բայց ան..շտապողականությունը, ..զգուշությունը և համարձակությունը, ճկունությունը և կարողությունը՝ վերլուծելով մեծ զորավարների հոգեբանական հատկությունները: Ն. Լեյտսը, որը նույնպես մեծ ներդրում է ունեցել օժտվածության խնդրի ուսումնասիրության մեջ, կարծում էր, որ ..նդունակություններն առանձին հատկություններ են, որոնք պայմանավորում են մարդու հնարավորությունները տարբեր տեսակի գործողություններում: ..նդունակությունների զարգացման համար անհրաժեշտ է գիտե-

լիքների և հմտությունների յուրացում, այնուհետև դրանց կիրառում ակտիվ սոցիալական կյանքի ..նթացքում: Շրջապատը կարող է խթանել կամ խոչ..նդոտել օժտվածության զարգացմանը: Օժտված երեխաներին ամեն ինչ հետաքրքրում է, ամեն ինչ անում են հաճույքով, փնտրում և գտնում են նոր խնդիրները՝ առանց զգուշության ..նդառաջ գնալով դրանց: Սակայն դա այն դեպքում, երբ շրջապատն ..նդունում է նրանց այնպիսին, ինչպիսին որ նրանք կան (ՄԱ): Հասկացությունների քարտեզ կազմելու գործ..նթացն ուսումնառության զորեղ ռազմավարություն է, որը բնույթով գրաֆիկական, գծագրական է և սովորողին ..ստիպում է մտածել տերմինների, մտքերի, գաղափարների հարաբերակցության մասին (ՈւժՄՀՎ):

Դ. Կենսաբանություն, քիմիա և աշխարհագրություն

Նեոդարվինիզմն ..նտրության ..սկզբունքը տարածում է ժառանգականության ներքջային միավորների՝ դետերմինանտների վրա, որոնց ..նտրությունը և անհավասարաչափ տեղաբաշխումն իբ..ր բխում են սեռական բ..ջջում դրանց միջև ..նթացող պայքարից և հանգեցնում են կենսական նոր ձևերի առաջացման (ՀՍՀ): Վալտեր Ֆրիդրիխ Հերման Նեոնստը 1894 թ. ցույց է տվել, որ լուծիչի դիսոցող ունակությունը մեծանում է դիէլեկտրիկ թափանցելիության աճին զուգ..նթաց և հայտնաբերել է էլեկտրաստիկցիայի երևույթը (ն. տ.): Լույսի ազդեցության տակ տերևներում առաջանում է քլորոֆիլ, որի շնորհիվ օդում ան..նդհատ վերականգնվում է թթվածինը (ՄՄ, ԱՊԲԳ): Լույսը վայրի կենդանուն ձեռ..նտու չէ, նա լույսից վախենում է, ինչպես կրակից (ՎԱ): Մի տեսակ երկյուղով էի վերաբերվում ես բնության ստեղծած այդ գեղեցկությանը և չէի համարձակվում պոկել այն: Եվ պոկեցի արմատից ..զգույշ, գրեթե ակնածությամբ: Իր շլացուցիչ գույներով գրավեց ինձ ճանճասպան կոչվող այդ սունկը: «Այդ ինչպե՞ս է բնությունը թույն դրել իր այդքան գեղեցիկ ..ստեղծագործության մեջ»: Եվ ..մբոստացա ես բնության այդ անարդար վերաբերմունքի դեմ (ն. տ.): Պուերտո Ռիկո

(«հարուստ նավահանգիստ») անվանումը ժամանակի ..նթացքում անցել է կղզուն, և քաղաքն ..ստացել է Սան Խուան անվանումը, որը Սան Խուան Բաուտիստա («Սուրբ Հովհաննես Մ..կ..րտիչ») անվան համառոտ ձևն է (ԼԽ):

Ե. Մաթեմատիկա, ֆիզիկա և ինֆորմատիկա

Ան..նդհատ մաթեմատիկական մեծության հասկացությունը Նյուտոնը մուծում է իբրև ան..նդհատ մեխանիկական շարժման տարբեր տեսակների վերացարկում:

Նյուտոնի «Համ..նդհանուր թվաբանությունը» (1707) կարևոր թեորեմներ է պարունակում հանրահաշվական հավասարումների մասին:

Երկնային մարմինների շարժման Նյուտոնի ..ստեղծած տեսությունը, որի հիմքում ..նկած է տիեզերական ձգողականության օրենքը, արժանացել է անգլիացի խոշորագույն գիտնականների ճանաչմանը, սակայն խիստ բացասաբար է ..նդունվել եվրոպական մայրցամաքում:

Նյուտոնը ք..ննարկել է հոծ զանգվածների ձգողության խնդիրները, մակ..նթացությունների և տեղատվությունների տեսությունը և այլն:

Հաստությունից կախված՝ նեյտրոնների անդրադարձիչի արդյունավետությունն ..սկզբից աճում է, ապա ..նդունում հաստատուն արժեք (ՀՍՀ):

Քսան հազարից ավելի տատանումներից արդեն ..սկսվում են ուլտրաձայները: Վերջիններս մարդկային ականջն ի վիճակի չէ ..նկալել (Ա):

UNL-ը («Համ..նդհանուր ցանցային լեզու» արտահայտության հապավումն է) համակարգչային լեզու է, որն ..նդօրինակում է բնական լեզուների հաղորդակցման գործառույթները և հնարավորություն է ..նձեռում արտահայտելու բնական լեզուների հաղորդած ամբողջ գիտելիքը (ՇԱ):

ԵՐԿՆԶՅՈՒՆՆԵՐԻ ՈՒՂՂԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ

9. Կետերի փոխարեն գրեթե երկինջյունները (կամ երկծայնավորները):

Ա. Պատմություն և իրավագիտություն

Բենիտո Մուսոլինին՝ Իտալիայի ֆաշիստական կուսակցության հիմնադիրը և ֆաշիստական կառավարության ղեկավարը, բռնվել է իտալացի պարտիզանների կողմից և Հ.սիսա.ն Իտալիայի Ազգա.ն ազատագրության կոմիտեի դատավճռով մահապատժի ենթարկվել (ՀԱՀ): 1867 թ. Ֆրանս.յի, 1879 թ. Իտալիայի կառավարությունները Մուրատ-Ռափա.լ.ն վարժարանն օժտում են լիցե.կան իրավունքներով (ն. տ.): Նապոլ.ն Առաջինը (Նապոլ.ն Բոնապարտը) ֆրանս.կան պետական գործիչ և զորավար էր, ֆրանս.կան Հանրապետության առաջին կոնսուլ (1799-1804), Ֆրանս.յի կայսր (1804-14, 1815) (ն. տ.): Մովսիսական օրենքները հիմնականում վերաբերում էին հր. ժողովրդի սոց.լ-տնտեսական հարաբերություններին և իրենցից ներկա.ցնում էին պատգամներ, խրատներ ու կանոններ: Թալմուդ.ն իրավունքը հետագա.մ իր արտահ.տությունն է գտնում նաև Ղուրանում և նրա օրենքներում՝ Շար.թում (ԳԱ): Երկրի վարչատարածքա.ն բաժանումը պ.մանավորված է տվ.լ ժամանակաշրջանի հասարակական-տնտեսական հարաբերություններով (ՎԱԳ): Արևմտ.ն Եվրոպա.մ՝ առանձնապես Անգլ.յում «Աստվածա.ն դատաստանի» փորձություններն աստիճանաբար դուրս են մղվում քր.կան դատավարությունից, կանխվում է դատական ապաց.ցների ձեռքբերման դաժան փորձությունների ոչ իրավական համակարգը (ԷԵ): Տիգրան Մեծը հնազանդեցրեց Կապադովկ.ն: Հռոմեական լեգ.նները հայերի վրա չէին համարձակվում հարձակվել (ՌԻ):

Բ. Կուլտուրա

Գեղարվեստական կրթություն

Հես.դոսի «Թ..գոնիայում» հիշատակված են ինը մուսաների անուններ, որոնցից Կլ..ն համարվում էր պատմագրության հովանին, Եվտերպեն՝ քնարական պոեզ..յի, Թալ..ն՝ կատակերգության, Մելպոմենեն՝ ողբերգության, Տերփսիքորեն՝ պարի, Երատոն՝ սիրա..ն պոեզ..յի, Պոլիհիմն..ն՝ ձոների, Ուրան..ն՝ աստղաբաշխության, Կալլ..պեն՝ էպոսի (ՀՄՀ): Ն..պոլ..ն օպերա..ն դպրոցում են սկզբնավորվել և բ..րեղացել սեր..օպերայի և բուֆ-օպերայի ժանրերը, որոնք լ..ն տարածում են գտել Իտալ..յի մ..ս երաժշտական կենտրոններում և Եվրոպայի խոշորագ..ն երկրներում (ն. տ.): Ն..իմպրես..նիզմը գեղանկարչական ուղղություն է, որն առաջացել է մոտ 1885 թ. Ֆրանս..յում (գլխավոր ներկա..ցուցիչներն են՝ Ժ. Ս..րան և Պ. Սին..կը) և տարածվել Բելգ..յում (Թ. վան Ռեյսելթերգե), Իտալ..յում (Ջ. Սեգանտինի) և այլն (ն. տ.): Ինկվիզից..յի «գործունեության» սահմակեցուցիչ դրվագներ կարելի է տեսնել լ..ն ճանաչում ձեռք բերած «Գո..յի ուրվականները» գեղարվեստական կինոնկարում (ԼԽ): Աշխատանքի ընթացքում սպասումները կարող են արդարանալ կամ չարդարանալ: Դրանով պ..մանավորված՝ մենեջերը պետք է հետևի, որ աշխատողը և կազմակերպությունը շարունակեն ստանալ այն, ինչ սպասում էին միմ..նցից (ԼՊ): Հ..րենիք վերադարձող արվեստագետներն իրենց հետ բերում էին դարագլխի գեղարվեստի փորձը՝ ողողված ռոմանտիզմի, սիմվոլիզմի, ռ..լիզմի, իմպրես..նիզմի, մոդեռն ոճի շնչով: Մասնագիտական կրթությունը նախ՝ Մոսկվայի գեղանկարչության, քանդակագործության և ճարտարապետության ուսումնարանում, ապա՝ Մ..նխենի Գեղարվեստի ակադեմ..յում ստացած Սուրեն..նցը մեծ ներդրում ունի թե՛ հայ արվեստում, թե՛ ռուսական մշակութա..ն կ..նքում (ՄՄԿ):

Գ. Կրթության հոգեբանություն և սոցիոլոգիա

Ստերնբերգի ամենից հ..տնի հետազոտութ..ներից մեկն ինտելեկտի փոխգործունեությունն է հմտության և կր..տիվության հետ (ընդհանուր ստեղծագործական ընդունակություններ) (ԱԳ): Անձի մասնագիտական կա..ցումը հոգեբանական տեսանկ..նից ներկա..ցնում է մարդու անհատական առանձնահատկություններով պ..մանավորված ներքին պոտենց..լի իրացում (ԷՓ): Կոնֆլիկտների բն..թի, էության, գործառ..թների, ախտորոշման և լուծման խնդիրները, ըստ էութ..ն, դիտարկվում են սոց..լոգ..կան տեսությունների կոնֆլիկտաբանական բաժիններում և սոց..լա..կան հոգեբանության շրջանակներում (ՀԹ): Անձի կառուցվածքում կենսաբանականը և սոց..լականը կազմում են մեկ միասնություն և չեն կարող հակադրվել միմ..նց (ԱԼ): Սոց..լոգ..կան մեկնաբանութ..ն համաձ..ն ժամանակակից հասարակության մեջ երեխաների հանդեպ բռնության դեպքերի տարածվածությունը պ..մանավորված է սոց..լական մի շարք գործոններով, առկա սոց..լական խաթարված արժեքներով, որոնցից մեկը բռնությունն է (ԱՕ): Քանի որ սննդա..ն վարքաձևի ն..րդային խանգարումների էթիոլոգ..կան գործոններից է հոգեբանականը, ապա դրանց հոգեկարգավորման բուժման գործում կարևոր դեր պետք է ունենա հոգեթերապ..ն՝ որպես բուժման ռեաբիլիտաց..ն գործընթացի հիմնական բաղկացուցիչ (ՀՇ):

Դ. Կենսաբանություն, քիմիա և աշխարհագրություն

Ն..րոնը ն..րդային բջիջ է, ն..րդային համակարգի կառուցվածքա..ն և ֆունկց..նալ հիմնական միավոր:

Թ..դոր Շվանը գերմանացի կենսաբան է, բջջա..ն տեսության ստեղծողը: Եղել է Լյովենի (1839-ից) և Լիեժի (1848-1880) համալսարանի պրոֆեսոր, Լոնդոնի թագավորական ընկերության (1879), Փարիզի (1879) և Բր..սելի (1841) ԳԱ անդամ: Գիտական աշխատությունները հիմնականում վերաբերում են մար-

տողության ֆիզ.լուգ.յին, ն.րդային համակարգի անատոմ.յին և հ.սվածքաբանությանը:

Ն.դիմը տարրերի պարբերության երրորդ խմբի քիմ.կան տարր է:

Սովորական պ.մաններում ..դը մուգ մոխրամանուշակագ.ն, թ..լ մետաղական փ..լով բ..րեղական ն..թ է: ..դի և ջրածնի միացման ռ..կց..ն դարձելի է:

Ֆրիտ..ֆ Նանսենի արշավախմբերի ու բազմամ.. աշխատանքների արդ..նքները հարստացրել են գիտությունը օվկ..նոսագիտական և օդերևութաբանական տվ..լներով (<ՍՀ>):

Չամբեզին իր մեծությունը թերևս արդարացնում է նրանով, որ այդ գետի վրա գտնվում է աշխարհի գեղեցիկ և բարձրավեժ ջրվեժներից մեկը՝ Վիկտոր.. ջրվեժը, որը գահավիժում է 120 մետր բարձրությունից և ունի 1800 մետր լ..նություն: Այն հ..տնագործել է անգլ..ցի ճանապարհորդ, Աֆրիկան հետազոտող Դավիթ Լիվինգստոնը 1855-ին և անվանել Մեծ Բրիտան..յի թագուհի Վիկտոր..յի անունով:

Խաղաղ օվկ..նոսում կա մի կղզեխումբ՝ հասարակածի մոտ, որ Էկվադորի նահանգն է: Այդ կղզեխումբը կոչվում է Գալապագոս: Կղզիների անվանումն իսպաներեն է, բառացի նշանակում է «կր..ների»:

<..սիսային Ամերիկայի հ..սիս-արևմուտքում է ընկած Ալ..սկա թերակղզին: Այնուամեն..նիվ, արդ..ք Ալ..սկան կետերի, իսկ Գալապագոսը կր..ների հ..րենիքն է, թե ոչ, դա թողնում ենք մասնագետներին, բայց մի բան պարզ է, որ կետերով առատ են եղել Ալ..սկայի ափերը, կր..ներով՝ Գալապագոս..ն կղզիները (ԼԽ):

Ե. Մաթեմատիկա, ֆիզիկա և ինֆորմատիկա

Ն..մանի խնդիրը եզրա..ն խնդիրներից մեկն է, որ դրվում է մասնական ածանց..լներով երկրորդ կարգի դիֆերենց..լ հավասարումների համար:

Միջուկա..ն ու..կտորում ն..տրոնների կլանիչները մեծացնում են ն..տրոնների կլանումը և տրոհվող ն..թի անհրաժեշտ բեռնավորումը:

Մուտքի և ելքի սարքերը թվանշանա..ն հաշվողական մեքենայի հիմնական հանգ..ցներից են, որոնց օգնությամբ ծրագրավորողի յուրաքանչ..ր հանձնարարական ներածվում է հիշող սարք և արդ..նքն արտածվում է հիշողությունից:

Շենոն Կլոդ Էլվուդի հիմնական աշխատությունները վերաբերում են տրամաբանութ..ն հանրահաշվին, ռել..կոնտակտա..ն սխեմաների և կապի մաթեմատիկական տեսութ..նը, ինֆորմաց..յին և կիրառնետիկա..ն (<ՍՀ>):

«Բայց, այնուամեն..նիվ, նա պտտվում է» արտահ..տությունը վերագրվում է իտալացի ֆիզիկոս Գալիլե..ն: Միջնադար..ն ինկվիզից..ն Գալիլե..ն դատի է տալիս, որովհետև նա կողմնակից էր Կոպեռնիկոսի այն տեսակետին, որ Երկիրը պտտվում է իր առանցքի շուրջը:

Ըստ ավանդության՝ Իսահակ Ն..տոնը ծառի տակ նստած ժամանակ հետևել է ծառից խնձորի ընկնելուն, որը և առիթ է հանդիսացել իր մեծ գ..տի՝ ձգողական ուժի հ..տնագործմանը:

